

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ
ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ուստիկանության ճանապարհային ուստիկանությունում (այսուհետ՝ ճանապարհային ուստիկանություն) հաշվառված, ինչպես նաև նոր ներմուծված և ճանապարհային ուստիկանությունում մշտական հաշվառման ենթակա մեխանիկական ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների (Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներ չհամարվող տրանսպորտային միջոցները, այսուհետ՝ տրանսպորտային միջոցներ) պարտադիր տեխնիկական գննության անցկացման կարգը:

2. Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննությունը (այսուհետ՝ տեխնիկական գննություն) իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում (այսուհետ՝ տեխնիկական գննության կայան) տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ:

3. Տեխնիկական զննություն իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություններ) լիցենզավորումը և լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Տեխնիկական զննությունն իրականացվում է վճարովի հիմունքով՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սակագնով:

II. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Տեխնիկական զննության հիմնական խնդիրներն են՝

1) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվ իրավական ակտերի, կանոնների, ստանդարտների և տեխնիկական նորմերի պահանջներին, ինչպես նաև վնասակար նյութերի մթնոլորտ արտանետման տեխնիկական նորմատիվներին տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և կահավորանքի համապատասխանության ապահովումը.

2) շահագործման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների կառուցվածքում ինքնակամ և երթևեկության անվտանգությանն սպառնացող փոփոխությունների կատարման կանխումը.

3) առևանգված, ինչպես նաև հետախուզվող և ոստիկանության կողմից որոնվող տրանսպորտային միջոցների հայտնաբերումը.

4) տեխնիկական զննության անցկացման արդյունքների մասին համապատասխան կառավարման մարմիններում տեղեկատվական բազայի ձևավորումն ու վարումը՝ նրանց կողմից սահմանվող կարգով:

6. Տեխնիկական զննությունն իրականացվում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ անկախ տրանսպորտային միջոցների հաշվառման վայրից:

7. Տրանսպորտային միջոցները ենթակա են տեխնիկական զննության՝ օրենքով սահմանված պարբերականությամբ:

8. Սեփականատերերը կամ սեփականատիրոջ ներկայացուցիչները (այսուհետ՝ տիրապետող) իրավունք ունեն տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության ներկայացնելու նախորդ տեխնիկական զննության ժամանակ սահմանված ժամկետից շուտ:

9. Հաջորդ տեխնիկական զննության ժամկետը հաշվարկվում է վերջին տեխնիկական զննության անցկացման օրվանից:

III. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

10. Տեխնիկական զննության կտրոն ստանալու համար տիրապետողը բանկերին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակները՝

1) տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը (հաշվառման վկայագիրը) կամ տեխնիկական կտրոնը, իսկ նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ՝ տրանսպորտային միջոցի մաքսային փաստաթղթերը.

2) տեխնիկական տրանսպորտային միջոցների գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը կամ պարտքերի չափի վերաբերյալ տեղեկանքը՝ բանկում համապատասխան վճարում կատարելու նպատակով: Նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա

մեխանիկական տրանսպորտային միջոցների տեխնիկական գննության ժամանակ գույքահարկի պարտավորությունների կատարման մասին տեղեկանքը չի ներկայացվում:

11. Սույն կարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերի համապատասխան տվյալների գրանցումից հետո սույն կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթուղթը տիրապետողին չի վերադարձվում:

12. Տեխնիկական գննություն անցկացնելու համար տիրապետողը տեխնիկական գննության կայան է ներկայացնում տրանսպորտային միջոցը և հետևյալ փաստաթղթերը՝

1) տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը (հաշվառման վկայագիրը) կամ տեխնիկական կտրոնը, իսկ նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների տեխնիկական գննության ժամանակ՝ տրանսպորտային միջոցի մաքսային փաստաթղթերը:

2) բանկերի կողմից տիրապետողին տրված կտրոնի 2-րդ հատվածը:

3) հատուկ լուսային և ձայնային ազդանշաններով տրանսպորտային միջոցի կահավորման վերաբերյալ փաստաթղթերը՝ ճանապարհային ոստիկանությունում համապատասխան գրառմամբ (դրոշմակնիքով), եթե տրանսպորտային միջոցը կահավորված է այդպիսի միջոցներով:

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի «Մեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վերասարքավորման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին» N 2388-Ն որոշմամբ սահմանված անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման համապատասխանության կամ ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների վկայագրման և գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման

մասին վկայականը (համաձայն սույն կարգի NN 2 կամ 3 ձևերի), ինչպես նաև տրանսպորտային միջոցի կառուցվածքում երթևեկության անվտանգության վրա ազդող փոփոխությունների օրինականությունը հավաստող փաստաթղթերը՝ բացառությամբ նոր ներմուծվողների:

13. Տեխնիկական զննություն անցկացնելու համար տիրապետողը տեխնիկական զննության կայան է ներկայացնում սույն կարգի 12-րդ կետում նշված փաստաթղթերի բնօրինակները, իսկ սույն կարգի 12-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը՝ նաև պատճենների տեսքով: Ներկայացված փաստաթղթերի համապատասխան սովյալների գրանցումից և պատճենների հետ համեմատումից հետո վերադարձվում են տիրապետողին՝ բացառությամբ սույն կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթի:

14. Բանկերի և տեխնիկական զննության կայանների կողմից չեն ընդունվում մատիտով լրացված կամ ջնջումներ, բացթողումներ, ինչպես նաև հաստատում չունեցող ուղղումներ պարունակող փաստաթղթերը:

15. Տեխնիկական զննության կտրոն ստանալու համար տիրապետողն սպասարկող բանկերում կատարում է հետևյալ վճարումները՝

1) համապատասխան տրանսպորտային միջոցի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված բնապահպանական վճարը, որը բանկի կողմից փոխանցվում է պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին.

2) համապատասխան տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության անցկացման համար նախատեսված ծառայության վճարը, որը բանկի կողմից փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանում բացված համապատասխան կուտակային հաշվին.

3) օրենքով սահմանված կարգով նախատեսված պետական տուրքը, որը բանկի կողմից փոխանցվում է պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին.

4) տրանսպորտային միջոցների գույքահարկի պարտավորության չափի վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքում հաշվարկված գույքահարկը, որը բանկի կողմից փոխանցվում է համապատասխան համայնքի բյուջե:

IV. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ

16. Տեխնիկական զննության կայաններում տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ և զննման միջոցով ստուգվում է տրանսպորտային միջոցների համապատասխանությունը շահագործման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների և դրանց լրացուցիչ սարքավորումների կառուցվածքին ու տեխնիկական վիճակին պահանջներ ներկայացնող՝ սույն կարգի N 1 ցանկում նշված նորմատիվ իրավական ակտերի, կանոնների, ստանդարտների և տեխնիկական նորմերի պահանջներին (այսուհետ՝ ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջներ):

17. Տեխնիկական զննության կայաններում կատարվում են տրանսպորտային միջոցների՝ սույն կարգի N 2 ցանկում նշված հանգույցների ու համակարգերի տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքները:

18. Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցները պետք է ունենան համապատասխանության սերտիֆիկատ և ապահովեն համապատասխան ստանդարտներով ու տեխնիկական նորմերով սահմանված ճշտությամբ չափումների կատարումը:

19. Տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման ժամանակ օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների ցանկը և դրանց հիմնական տեխնիկական բնութագրերը ներկայացված են սույն կարգի N 3 ցանկում:

20. Ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջներին և մնացած պարամետրերի անհամապատասխանության դեպքում արատորոշման քարտում կատարվում է

նշում, և տրանսպորտային միջոցները տնօրինողները զգուշացվում են դրանց անհապաղ վերացման մասին, որի համար վերջիններս ստորագրում են արատորոշման քարտում:

21. Ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջները չբավարարած և անսարք համարված տրանսպորտային միջոցի կրկնակի զննությունը տեխնիկական զննությունից հետո 20 օրվա ընթացքում իրականացվելու դեպքում տիրապետող համապատասխան արատորոշման քարտը ներկայացնում է տեխնիկական զննության կայան, և տեխնիկական վիճակն ստուգվում է միայն այն ցուցանիշների գծով, որոնք հիմք են հանդիսացել նախորդ զննության ժամանակ արձանագրված անհամապատասխանությունների համար:

22. Երբ տեխնիկական զննության ընթացքում տրանսպորտային միջոցի համարակիր ագրեգատների համարների դաջվածքներում կամ հաշվառման փաստաթղթերում հայտնաբերվում են ակնհայտ կեղծիքների փաստեր, ապա տեխնիկական զննության կայանի հսկիչը դրա մասին անհապաղ տեղեկացնում է տեխնիկական զննության կայանի ղեկավարին, իսկ վերջինս էլ հայտնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

V. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Տեխնիկական վիճակի ստուգման արդյունքի հիման վրա համակարգչի միջոցով ձևակերպվում է տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության արատորոշման N 1 ձևի քարտը (այսուհետ՝ արատորոշման քարտ):

24. Արատորոշման քարտերի լրացման համակարգչային ծրագրային ապահովումը՝ քարտում բոլոր տվյալները լրացնելուց և հսկիչի էլեկտրոնային ստորագրությունը դնելուց ու

համապատասխան հրահանգով աշխատանքների ավարտը հաստատելուց հետո բացատրում է որևէ անձի կողմից քարտում փոփոխությունների կատարումը:

25. Սույն կարգին համապատասխան կազմված արատորոշման քարտերը չեն կարող հանվել համակարգչի հիշողությունից՝ մինչև հաջորդ տեխնիկական գննության ավարտը:

26. Արատորոշման քարտը տպվում է նաև թղթային կրիչի վրա՝ երկու օրինակից: Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հսկիչի և տրանսպորտային միջոցը տիրապետողի կողմից ստորագրվելուց և հսկիչի կնիքով կնքվելուց հետո արատորոշման քարտի առաջին օրինակը հանձնվում է տրանսպորտային միջոցը տիրապետողին, երկրորդը պահվում է տեխնիկական գննության կայանում, որը համարվում է խիստ հաշվառման փաստաթուղթ և պահպանվում է մինչև հաջորդ տարվա տեխնիկական գննության ժամկետի ավարտը:

27. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց և սույն կարգի 15-րդ կետով սահմանված վճարումներն իրականացնելուց հետո սպասարկող բանկի կողմից լրացվում և տիրապետողին է տրամադրվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ձևի տեխնիկական գննության կտրոն: Տեխնիկական գննության կտրոնի դիմային մասի քառակուսի վանդակում փակցվում է հաջորդ տեխնիկական գննության անցկացման ամիսը նշող՝ հռոմեական թվերով նշված հերթական համարը:

28. Տեխնիկական գննության կտրոնը կորցնելու կամ ոչ պիտանի դառնալու դեպքերում տիրապետողի դիմումի համաձայն բանկն ստուգում է տեխնիկական գննության կտրոնի՝ նախկինում տրամադրված լինելու փաստը: Տեխնիկական գննություն անցնելու փաստը հաստատվելու և սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետում և 14-րդ կետում նշված դրույթների կատարման դեպքում ձևակերպվում և տրվում է տեխնիկական գննության կտրոնի կրկնօրինակ: Այս դեպքում հաջորդ տեխնիկական գննության ներկայացման ժամկետը չի փոխվում: Տեխնիկական գննության կտրոնի «Հատուկ նշումներ» ստորում

կատարվում է «Կրկնօրինակ» նշումը: Տեխնիկական զննություն անցնելու փաստը չհաստատվելու դեպքում այն կատարվում է սույն կարգի պահանջներին համապատասխան:

VI. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

29. Տեխնիկական զննության արդյունքում տեխնիկական զննության կայանները համակարգչի միջոցով գրանցամատյանում կատարում են տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցների հաշվառում:

30. Տրանսպորտային միջոցի արատորոշման քարտում նշված բոլոր տվյալները, կառուցվածքային ու հարմարադասման մեջ կատարված փոփոխությունների մասին լրացուցիչ տեղեկությունները և տրանսպորտային միջոցի ստուգման արձանագրությունները գրանցվում են տեխնիկական զննության կայանի համակարգչում գրանցամատյանի տեսքով, որի տվյալները տրանսպորտային միջոցի տեխնիկական զննությունից անմիջապես հետո կայանների համակարգչային ցանցի միջոցով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության սերվերին՝ վերահսկողական աշխատանքներ իրականացնելու, արտակարգ իրավիճակներում բնակչության և տնտեսության տրանսպորտային սպասարկումը պլանավորելու և կազմակերպելու նպատակով, ինչպես նաև կանոնավոր ուղևորափոխադրումների մրցույթին ներկայացված տվյալների փոփոխությունը պարզելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

31. Տեխնիկական զննության կայանների համակարգչային ցանցից կարող է օգտվել ճանապարհային ոստիկանությունը, որն օրենքով սահմանված դեպքերում կարող է ստուգել տեխնիկական զննության ընթացքը՝ հետախուզման մեջ գտնվող՝ տրանսպորտային միջոցների, դրանց ագրեգատների հայտնաբերման նպատակով:

32. Տրանսպորտային միջոցների առկայության ու դրանց տեխնիկական վիճակի տվյալների գրանցամատյանի ձևը և դրա վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարը:

33. Տեխնիկական գննության կտրոնները համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր և պահպանվում ու օգտագործվում են դրանց համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

34. Տրանսպորտային միջոցների առկայության ու դրանց տեխնիկական վիճակի տվյալների գրանցամատյանում նշվող տեղեկությունները ծառայողական օգտագործման համար են և հրապարակման ենթակա չեն՝ բացառությամբ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ց Ա Ն Կ N 1

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱ- ՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԿԱՆՈՆՆԵՐԻ, ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽ- ՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ

1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» N 955-Ն որոշում

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի «Մեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վերասարքավորման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոմոբիլների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին» N 2388-Ն որոշում

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տրանսպորտային միջոցների պետական տեխնիկական զննության անցկացման և դրանց դեղին հիմնագույնի համարանիշների հատկացման կարգը հաստատելու մասին» N 32-Ն որոշում

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Կարմիր, կապույտ, դեղին (նարնջագույն), լուսնասպիտակ առկայծող փարոսիկներով կահավորման ենթակա տրանսպորտային միջոցների ցանկը հաստատելու մասին» N 2329-Ն որոշում

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 16-ի «Ավտոտրանսպորտային միջոցների պետական գրանցման առանձնահատուկ համարանիշների և հատուկ ազդանշանների օգտագործումը կանոնակարգելու մասին» N 367 որոշում

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի «Տրանսպորտային միջոցներում գովազդի տեղադրման կարգը հաստատելու մասին» N 2137-Ն որոշում

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի «Քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող՝ ոստիկանության կողմից հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N 1566-Ն որոշում

9. ՀՍ-185-2006 օպերատիվ ծառայությունների ավտոմեքենաներ, ավտոբուսներ և մոտոցիկլետներ. Գունագծապատկերներ, ճանաչման նշաններ, մակագրություններ, լուսային և ձայնային հատուկ ազդանշաններ. Ընդհանուր պահանջներ (հաստատված Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006 թվականի հունիսի 29-ի N 146 հրամանով)

10. ՀՍ-110-2006 տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ. Տիպեր և հիմնական չափեր. Տեխնիկական պահանջներ և շահագործման վերաբերյալ ցուցումներ (հաստատված Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի N 246-Ա հրամանով)

11. ГОСТ Р 51709-2001 «Автотранспортные средства. Требования безопасности к техническому состоянию и методы проверки»

12. ГОСТ 5727-88 «Стекло безопасное для наземного транспорта. Технические требования»

Ց Ա Ն Կ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Ագրեգատների, հանգույցների, համակարգերի և աշխատանքների անվանումները	Դիրքը՝ ըստ արատորոշման քարտի
<i>Արգելակային համակարգ</i>		
1.	<p>Արգելակային ստենդի վրա փորձարկման ժամանակ տրանսպորտային միջոցի արգելակման արդյունավետության և կայունության ստուգում,</p> <p align="center">այդ թվում</p> <p>1) բանվորական արգելակային համակարգի տեսակարար արգելակման ուժերի որոշում</p> <p>2) անիվների արգելակային ուժերի անհավասարաչափության գործակցի որոշում</p> <p>3) կայանման արգելակային համակարգի տեսակարար արգելակման ուժի որոշում</p> <p>4) բանվորական արգելակային համակարգի գործարկման ժամանակի որոշում</p> <p>5) օժանդակ արգելակային համակարգի աշխատունակության ստուգում</p>	<p>101</p> <p>103</p> <p>102</p> <p>111</p> <p>113</p>
2.	<p>Ճանապարհային փորձարկման ժամանակ տրանսպորտային միջոցի արգելակման արդյունավետության և կայունության ստուգում</p> <p align="center">այդ թվում</p> <p>1) արգելակման ճանապարհի երկարության չափում</p> <p>2) կայունացված դանդաղեցման մեծության չափում</p> <p>3) արգելակման ժամանակ շարժման ուղղությունից տրանսպորտային միջոցի գծային շեղման առկայության ստուգում</p> <p>4) թեքության վրա կայանման արգելակային համակարգը պահելու ունակության ստուգում</p> <p>5) օժանդակ արգելակային համակարգի աշխատունակության ստուգում</p>	<p>104</p> <p>105</p> <p>112</p> <p>106</p> <p>113</p>
3.	Պննմատիկ արգելակային շարժաբերի հերմետիկության ստուգում	107
4.	Հիդրավլիկ արգելակային շարժաբերի հերմետիկության ստուգում	108
5.	Ազդանշանման համակարգի և ճնշաչափի աշխատունակության ստուգում	109
6.	Արգելակային համակարգի տարրերի տեխնիկական վիճակի ստուգում	113
7.	Տրանսպորտային միջոցի կառուցվածքին արգելակային համակարգի և դրա տարրերի համապատասխանության ստուգում	114
<i>Ղեկային կառավարում</i>		
1.	Ղեկանիվի առավելագույն շրջադարձի անկյան և դեկային վարման գումարային խաղի մեծության չափում	201
2.	Ղեկային կառավարման դետալների փոխադարձ տեղաշարժի և խաղի առկայության ու պարուրակային միացությունների սևեռման հուսալիության ստուգում	202
3.	Ղեկային կառավարման ուժեղարարի տեխնիկական վիճակի և աշխատունակության ստուգում	203
4.	Ղեկային կառավարման տարրերի տեխնիկական վիճակի և ամրակապման ստուգում	204
<i>Արդարին յուսավորման սարքեր</i>		

1.	Ներկայացվող պահանջներին արտաքին լուսավորման սարքերի քանակի, տեսակի, դասավորության, վիճակի և գույնի համապատասխանության ու սահմանված ռեժիմում դրանց աշխատունակության ստուգում այդ թվում	301
	1) հեռահար և մոտակա լույսի լապտերների	302
	2) առջևի և հետևի հակամառախողային լապտերների	303
	3) արգելակման ազդանշանների	304
	4) եզրաչափային լույսերի	305
	5) շրջադարձի ցուցիչների և վթարային ազդարարիչների	307
	6) հետընթացի լույսերի	306
	7) գրանցման համարանիշի լուսավորման լապտերիկի	308
	8) լուսային անդրադարձիչների	309
	9) ավտոգնացքի նշանների	301
	10) հեռահար և մոտակա լույսի լապտերների ու հակամառախողային լապտերների լույսի ուժի ստուգում	302
Հողմապակու ապակեմաքրիչներ և ապակեվազներ		
1.	Հողմապակու ապակեմաքրիչների և ողողիչների վիճակի և սահմանված ռեժիմում դրանց աշխատունակության ստուգում այդ թվում	
	1) ապակեմաքրիչների	401
	2) ապակեվազների	402
Անիվներ և դողեր		
1.	Դողերի մակնիշավորմանը և տրանսպորտային միջոցի կառուցվածքին, չափին և թույլատրելի բեռնվածքին դրանց համապատասխանության ու տեխնիկական վիճակի ստուգում այդ թվում	
	1) պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրության	501
	2) դողերի վնասվածքի առկայության	502
	3) անիվների տեղակայման	503
	4) անվահեծերի և սկավառակների ամրակապման ու վիճակի	504
Շարժիչը և դրա համակարգերը		
1.	Բենզինային և գազաբալոնային շարժիչի բանաձև գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի՝ CO, և ածխաջրածինների՝ CH) պարունակության ստուգում	601
2.	Դիզելային շարժիչի ծխայնության ստուգում	602
3.	Մանան համակարգի սարքերի և խողովակաշարերի հերմետիկության ստուգում	603
4.	Չեզոքացուցիչների առկայության և սարքինության բանաձև գազերի արտածման համակարգի համալրվածության և այրվածքների, մեխանիկական ծակվածքների ու անկիպությունների առկայության ստուգում	604
Կառուցվածքի այլ տարրեր		
1.	Պետական գրանցման համարանիշների տեղի համապատասխանությունը տեխնիկական պայմանների պահանջներին և ամրացման հուսալիության ստուգում	701
2.	Տրանսպորտային միջոցի և դրա ազդեցատների մականշվածքների համապատասխանությունը տեխնիկական անձնագրի տվյալներին և դրանց փոփոխման առկայությունը	702
3.	Հետին տեսանելիության հայելիների առկայության, դրանց վիճակի և ամրակապման ստուգում	703
4.	Չայնային ազդանշանի աշխատունակության ստուգում	704
5.	Ապակիների վիճակի (տեսանելիության), վարորդի նստատեղից տեսանելիությունը սահմանափակող լրացուցիչ իրերի առկայության ստուգում	705
6.	Վազբաչափի, պտուտաչափի և այլ չափիչ սարքերի սարքինության ստուգում	706

7.	Կախոցքի և կարդանային փոխանցման տարրերի տեխնիկական վիճակի և ամրակապման ստուգում	707
8.	Վարորդի և ուղևորների նստարանների կարգավորման մեխանիզմի տեխնիկական վիճակի և ամրակապման ստուգում	708
9.	Դռների կողպեքների, կողերի փականների, ցիստեռների բկանցքերի աշխատունակության ստուգում	709
10.	Դռների կառավարման շարժաբերի աշխատունակության ստուգում	710
11.	Ավտոբուսների սրահներից վթարային ելքերի աշխատունակության, դրանց ցուցիչների և օգտագործման կարգի վերաբերյալ ցուցումների առկայության ստուգում	711
12.	Ապակիների տաքացման և փչահարման սարքերի աշխատունակության ստուգում	712
13.	Հետին պաշտպանիչ սարքվածքի, ցեխապաշտպանիչ գոգնոցների ու ցայտապաշտպանիչների առկայության, դրանց ամրակապման և վիճակի ստուգում	713
14.	Կցանքային հարմարանքի տեխնիկական վիճակի, սարքիության և տարրերի ամրակապման հուսալիության ստուգում	714
15.	Բժշկական դեղատուփի, կրակմարիչի, վթարային կանգառի նշանի առկայության ստուգում	715
16.	Հակահետգլորման հենակների առկայության ստուգում	716
17.	Անվտանգության գոտիների առկայության և աշխատունակության ստուգում	717
18.	Տեխնիկական նորմատիվների և ստանդարտների պահանջներին օպերատիվ և հատուկ ծառայությունների տրանսպորտային միջոցների գունագրաֆիկ ներկվածքի, հատուկ ձայնային և լուսային ազդանշանների համապատասխանության ստուգում	718
<i>Այլ աշխատանքներ</i>		
1.	Տրանսպորտային միջոցի կառուցվածքում փոփոխությունների առկայության և դրանց վերաբերյալ համապատասխան մարմինների թույլտվության կամ համաձայնության առկայության ստուգում	801
2.	Մեծ եզրաչափեր ունեցող և ծանրաքաշ բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների մոտ ապահովիչ հարմարանքների, լրացուցիչ հայելիների տարբերիչ նշանների, առկայծող փարոսիկների առկայության ստուգում	802
3.	Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների մոտ տարբերիչ նշանների և փոխադրման անվտանգության պահանջներով նախատեսված այլ սարքերի առկայության, դրանց աշխատունակության և ամրացման հուսալիության ստուգում	803
4.	Մասնագիտացված տրանսպորտային միջոցների մոտ բեռի ամրացման հարմարանքի, հատուկ թափքերի, ցիստեռների և այլ սարքավորումների տեխնիկական վիճակի, աշխատունակության և հուսալիության ստուգում	804
5.	Հատուկ տրանսպորտային միջոցների կառուցվածքով և տեխնիկական փաստաթղթերով նախատեսված սարքավորումների առկայության, դրանց տեխնիկական վիճակի և աշխատունակության ստուգում	805

Ց Ա Ն Կ N 3

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԴԻԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՈՐՈՇՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

NN ը/կ	Սարքավորման տեսակը	Տեխնիկական բնութագիրը		
		վերահսկվող (ստուգվող) պարամետրերը	չափման սահմանը	առավելագույն սխալանքը
1	2	3	4	5
Արգելակային համակարգի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները				
1.	Հոլովակային ստենդ՝ թեթև մարդատար ավտոմոբիլների, միկրոավտոբուսների և փոքրատոննաժ բեռնատար ավտոմոբիլների արգելակային համակարգի ստուգման համար, որոնց սռնու վրա ընկնող առավելագույն զանգվածը չի գերազանցում 1000 կգ-ը	արգելակման ուժերը	0-6.0 կՆ	5 %
		կառավարման օրգանի վրա գործադրվող ուժը	300-700 Ն	5 %
		արգելակային համակարգի գործարկման ժամանակը	0.4-2.0 վ	+/-0.03 վ
		տրանսպորտային միջոցի զանգվածը	600-4000 կգ	2 %
2.	Հոլովակային ստենդ՝ բեռնատար ավտոմոբիլների և ավտոբուսների արգելակային համակարգի ստուգման համար, որոնց սռնու վրա ընկնող առավելագույն զանգվածը չի գերազանցում 13000 կգ-ը	արգելակման ուժերը	0-40 ԿՆ	5 %
		կառավարման օրգանի վրա ընկնող ուժը	300-700 Ն	5 %
		արգելակային համակարգի գործարկման ժամանակը	0.4-2.0 վ	+/-0.03 վ
		տրանսպորտային միջոցի զանգվածը	1500-13000 կգ	2 %
3.	Ունիվերսալ հոլովակային ստենդ՝ թեթև մարդատար և բեռնատար ավտոմոբիլների ու ավտոբուսների արգելակային համակարգի ստուգման համար, որոնց սռնու վրա ընկնող առավելագույն զանգվածը չի գերազանցում 13000 կգ-ը (օգտագործվում է սույն ցանկի 1-ին և 2-րդ կետերում նշված ստենդների և 4-րդ կետում նշված սարքի փոխարեն)	արգելակման ուժերը	0-40 ԿՆ	5 %
		կառավարման օրգանի վրա գործադրվող ուժը	300-700 Ն	5 %
		արգելակային համակարգի գործարկման ժամանակը	0.4-2.0 վ	+/-0.03 վ
		տրանսպորտային միջոցի զանգվածը	600-13000 կգ	2 %
4.	Ճանապարհային պայմաններում տրանսպորտային միջոցների արգելակային համակարգի ստուգման սարք (օգտագործվում է սույն ցանկի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված հոլովակային ստենդների փոխարեն)	դանդաղեցումը և կայունացված դանդաղեցման հաշվարկը	0.4-8 մ/վ ²	4 %
		արգելակման ճանապարհ	9-30 մ	5 %
		արգելակային համակարգի գործարկման ժամանակը	0.2-2 վ	+/-0.03 վ
		կառավարման օրգանի վրա գործադրվող ուժը	400-750 Ն	5 %
		տրանսպորտային միջոցի շարժման արագությունը	2.6 կմ/ժ	+/-1 կմ/ժ

1	2	3	4	5
5.	Դանդադաչափիչ՝ տրանսպորտային միջոցի դանդադեցման չափիչ (օգտագործվում է միայն օժանդակ արգելակման համակարգի ստուգման համար՝ սույն ցանկի 4-րդ կետում նշված սարքի բացակայության դեպքում)	օժանդակ արգելակման համակարգով տրանսպորտային միջոցի արգելակման ժամանակ կայունացված դանդադեցումը	0.4-1 մ/վ ² և ավտոմատ տարբեր արագություններ	5 %
Ղեկային վարման համակարգի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները				
6.	Սարք՝ ղեկային վարման գումարային խաղի չափման համար (35 կգ/Նժ)	ղեկանիվի շրջադարձի անկյունը	մինչև 25 աստիճան	+/-1 աստ.
		ճիգը՝ ղեկանիվի շրջադարձի ժամանակ	մինչև 35 Ն	1 %
7.	Ձողակարկին	գծային չափերի չափում	0.5-100 մմ	+/- 0.05 մմ
Արտաքին լուսավորման սարքերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները				
8.	Սարք՝ արտաքին լուսային սարքերի լույսի ստուգման համար	լուսաստվերային սահման պարունակող հարթության թեքվածքը	30°-150°	0.5 %
		լուսային փնջի առանցքի հորիզոնական շեղումը հաշվանցման առանցքից	մինչև 5	0.5 %
Անիվների և դողերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները				
9.	Դողերի ճնշաչափերի հավաքածու	սեղմված օդի ճնշումը	մինչև 1 ՄՊա (10 կգ/սմ ²)	+/- 0.01 ՄՊա
10.	Դողի պահպանաշերտի նախշերի խորության չափիչ	պահպանաշերտի նախշերի մնացորդային բարձրությունը	0.5-3.0 մմ	+/-0.1 մմ
Շարժիչի և դրա համակարգերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները				
11.	Գազաանալիզատոր (սարք՝ կայծային բռնկմամբ շարժիչներով (բենզինային, գազային) ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակների չափման համար)	ածխածնի օքսիդի (CO) պարունակությունը	մինչև 5 %	5 %
		ածխաջրածինների (CH) պարունակությունը	500-4000 մլն ⁻¹	5 %
		ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունը	500-3500 ըոպե ⁻¹	2.5 %
12.	Ծխաչափ (սարք՝ դիզելային շարժիչով ավտոտրանսպորտային միջոցների ծխախոտային (դիսպերս մասնիկների) չափման համար կամ ունիվերսալ չափիչ սարք՝ կայծային բռնկմամբ շարժիչներով (բենզինային, գազային) և դիզելային շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակներ չափելու համար (օգտագործվում է սույն ցանկի 11-րդ կետում նշված գազաանալիզատորի և 12-րդ կետում նշված ծխաչափի փոխարեն)	լուսային հոսքի թուլացման իրական ցուցանիշը	0.2-2մ ⁻¹	2.5 %
		լուսային հոսքի թուլացման գործակիցը	5-80 %	2.5 %
		ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունը	500-8000 ըոպե ⁻¹	1 %
		տվյալները համապատասխանաբար ըստ սույն ցանկի 11-րդ և 12-րդ կետերի	համապատասխանաբար ըստ սույն ցանկի 11-րդ և 12-րդ կետերի	համապատասխանաբար ըստ սույն ցանկի 11-րդ և 12-րդ կետերի

1	2	3	4	5
13.	Հոսադրոնիչ՝ տրանսպորտային միջոցի սնման գազային համակարգի հերմետիկության ստուգման համար	օդում պրոպանի (մեթանի, հեքսանի և այլնի) պարունակությունը	մինչև 20 %	2 %
Տրանսպորտային միջոցի կառուցվածքի այլ տարրերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները				
14.	Ստենդ՝ տրանսպորտային միջոցների դեկային վարման շարժաբերի և կախոցքի վիճակի ստուգման համար	երկու փոխադրահայաց ուղղություններով հարթակների տեղաշարժը հարթակների տեղաշարժի առավելագույն ճիգը, ոչ պակաս՝ թեթև մարդատար ավտոմոբիլների համար բեռնատար ավտոմոբիլների և ավտոբուսների համար	100 մմ 11 ԿՆ 30 ԿՆ	
Պարտադիր գարաժային սարքավորումներ				
15.	Կոմպրեսոր՝ մանոմետրով, ծայրակալով	արտադրողականությունը վերջնական ճնշումը	1 մ ³ /րոպե մինչև 1 ՄՊա (10 կգ/սմ ²)	-
16.	Ավտոմեխանիկի գործիքների հավաքակազմ	-	-	-
Համակարգչային տեխնիկա				
17.	Համակարգիչ՝ լազերային տպիչով	տակտային հաճախականություն գործարարական հիշողության ծավալը	1000 ՄՀց և ավելի 128 ՄԲ և ավելի	-

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՐԱՏՈՐՈՇՄԱՆ ՔԱՐՏ

Տեխնիկական գնության կայանի անվանումը _____
 Գտնվելու վայրը _____ , պետական գրանցման N _____
 Տեխնիկական գնության ամսաթիվը _____ 200 թ.
 Տեխնիկական գնության փուլը՝ սկզբնական (կրկնակի) (ընդգծել)
 Մակնիշը _____ , թողարկման տարեթիվը _____
 Համարանիշը _____ , թափք N _____
 Շարժիչը _____ , հենասահիքը _____
 Նույնականացման (VIN) համարը _____
 Պետական գրանցման փաստաթուղթը _____ , սերիան _____ , համարը _____

Գրանցված է Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության

_____ բաժանմունքում:

Ստեղծված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար վերասարքավորման

ակտի N _____ , տրված _____ 200 թ.

Արգելակային համակարգ	100	բանվոր. արգելակ. տես. արգելակ. ուժը	101	կայան. արգելակ. տես. արգելակ. ուժ	102	անիվների արգելակ. ուժերի անհավ.	103	արգելակային ճանապարհը	104
Կայունացված դանդաղեցումը	105	թեքության վրա կայանման արգելակ	106	պնևմատիկ արգելաշարժաբերի հերմ.	107	հիդրավլիկ արգելակ. շարժաբերի հերմետ.	108	ազդանշանման ճնշաչափը	109
Բանվոր. արգելակ. գործարկման ժամ.	110	արգելակման ժամանակ գծային շեղում	111	օժանդակ արգելակ. համակարգ	112	արգելակ. տարրերի վիճակը	113	արգելակ. տարրերի համապատ.	114
Ղեկային կառավարում	200	ղեկանիվի գումարային խաղը	201	ղետալների տեղաշարժ խաղ, սևեռում	202	ղեկային ուժեղարարի	203	ղեկային կառավար. տարրերի վիճակը	204
Արտաքին լուսավորման սարքեր	300	հեռահար, մոտակա լույսի լապտերներ	301	հակամառախուղ. լապտերներ	302	արգելակման ազդանշաններ	303	եզրաչափային լույսեր	304
Շրջադարձի ցուցիչ վթար. ազդար.	305	Համարանիշի լուսավոր. լապտեր	306	հետընթացի լույսեր	307	լուսային անդրադարձիչներ	308	ավտոգնացքի նշաններ	309
Հողմապակու մաքրիչներ, վիպակներ	400	ապակե-մաքրիչներ	401	ապակեվազներ	402				

Անիվներ և դողեր	500	պահպանա- շերտի նախշանկար	501	դողերի վնասվածք	502	դողերի տեղակայումը	503	անվահեծեր և սկավառակներ	504
Շարժիչը և դրա համակարգերը	600	CO-ի և CH-ի պարունա- կությունը	601	դիզել. շարժիչի ծխայնությունը	602	սնման համակարգը	603	արտածման համակարգը	604
Կառուցվածքի այլ տարրեր	700	գրանցման համարանի- շերը	701	տրանսպորտ. միջոց. մակնիշավորում	702	հետին տեսանելիու- թյան հայելիներ	703	ձայնային ազդանշանը	704
Ապակիների տեսանելի թափանցիկ.	705	վազքաչափ, պտու- տաչափ, այլ սարք	706	կախոցքի, կարդան. փոխանց. տարրեր	707	վարորդի նստարանի մեխանիզմ	708	կողպեք- փական ցիստեռնների	709
Դռների կառավարման շարժարեքը	710	վթարային ելքը	711	ապակե տաքացուց. և փչահար սարք	712	ցեխապաշտ- պանիչ գոգնոցներ	713	կցանքային հարմարանք	714
Դեղատուփ, կրակմարիչ, կանգառի նշան	715	հակահետ- գորման հենակներ	716	անվտանգությա և գոտիներ	717	գունագրաֆիկ ներկազդա- նշաններ	718		
Կառուցվածքի փոփոխություն	801	մեծ եզրաչափերով և ծանրաքաշ բեռ	802	վտանգավոր բեռ	803	մասնագի- տացված տրանսպորտ	804	հատուկ տրանս- պորտային միջոց	805

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հատկացվել է N _____ տեխնիկական գննության կտրոնը:

Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հսկիչ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

Կ.Տ.

Տրանսպորտային միջոցը տնօրինող _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԻՆ (ԿՏՐՈՆԻՆ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների (Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներ չհամարվող տրանսպորտային միջոցներ, այսուհետ՝ տրանսպորտային միջոցներ) պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջներով և շրջանառության կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննություն անցկացնելու համար հավաստող փաստաթղթին ներկայացվող պահանջները և դրա պատրաստման, պահպանման, հաշվառման, բացթողման ու օգտագործման կարգը:

2. Սույն կարգի պահանջները տարածվում են բանկերի, տեխնիկական զննության կայանների և դրանց լիցենզավորումն ու լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնող լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության վրա:

3. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնի պատրաստման պատվիրատուն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-

րությունը, որը կարգավորում է նաև բանկերին կտրոններ տալու, հաշվառելու և դրա շրջանառության հետ կապված այլ հարցեր:

II. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԿՏՐՈՆԻ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Տեխնիկական զննության կտրոնը պատրաստվում է քարտի ձևով, որն ունի 2-րդ հատված՝ կտրման գծիկով, որպեսզի հնարավոր լինի անվնաս կերպով այն անջատել ամբողջությունից: Կտրոնի 2-րդ հատվածի հակառակ կողմի վերևի աջ անկյունում նշվում է հավելված բառը: Կտրոնի 2-րդ հատվածի հակառակ կողմն ունի պաշտպանիչ (հողոգրաֆիկ) նշան:

5. Տեխնիկական զննության կտրոնի դիմային կողմի գույնը կրկնվում է յուրաքանչյուր 6 տարվանից հետո հետևյալ հաջորդականությամբ՝

Գույները	Տարիները	
Կանաչ	2007	2013
Նարնջագույն	2008	2014
Վարդագույն	2009	2015
Մանուշակագույն	2010	2016
Դեղին	2011	2017
Կապույտ	2012	2018

6. Տեխնիկական զննության կտրոնի դիմային կողմը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) տպագրական եղանակով կատարված տեքստերը՝

ա. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆ»,

բ. տրանսպորտային միջոցի հաջորդ տեխնիկական զննություն անցկացնելու տարեթիվը և քառակուսի վանդակ՝ հաջորդ տեխնիկական զննություն անցկացնելու ամիսը նշելու համար,

գ. տեխնիկական զննության կտրոնի հերթական համարը նշող վեցանիշ թիվ.

2) թեթև մարդատար ավտոմոբիլի ուրվանկարը:

7. Տեխնիկական զննության կտրոնի 1-ին հատվածի հակառակ կողմը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) տպագրական եղանակով կատարված հետևյալ գրառումները՝ տեխնիկական զննության կտրոնի հերթական համարը նշող վեցանիշ թիվը, «Տիրապետողի անունը, ազգանունը», «Մակնիշը», «Համարանիշը», «Թողարկման տարեթիվը», «Հատուկ նշումներ», «Տրման ամսաթիվը՝ ---- ———-20 թ.».

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված տվյալների լրացման համար անհրաժեշտ նշագծված տարածություն:

8. Տեխնիկական զննության կտրոնի 2-րդ հատվածի հակառակ կողմը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) տպագրական եղանակով կատարված հետևյալ գրառումները՝ տեխնիկական զննության կտրոնի հերթական համարը նշող վեցանիշ թիվը, «Տիրապետողի անունը, ազգանունը», «Մակնիշը», «Համարանիշը», «Թողարկման տարեթիվը», «Տեխնիկական զննության կայանի ծածկագիրը», «Հատուկ նշումներ», «Տրման ամսաթիվը՝ ---- ———- 20 թ.».

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված տվյալների լրացման համար անհրաժեշտ նշագծված տարածություն:

9. Տեխնիկական զննության կայանի ծածկագիրը պարունակում է ՀԴ 003-2000 «Վարչատարածքային միավորների դասակարգիչ» դասակարգչով նախատեսված տվյալ մարզի (Երևան քաղաքի) համապատասխան կողը և տվյալ մարզում (Երևան քաղաքում)՝ տեխնիկական զննության գործունեություն իրականացնող կազմակերպության լիցենզիայի համարը՝ երկնիշ արաբական թվանշաններով:

10. Տեխնիկական զննության կայանների ծածկագրերը նշված են ցանկում:

11. Տեխնիկական զննության կտրոնի վրա տպագրական եղանակով կատարված տեքստերի ու տվյալների գրառումները պետք է լինեն սև գույնի:

12. Սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերի 1-ին ենթակետերում նշված տվյալները կարող են լրացվել գնդիկավոր կամ թանաքի գրիչով, ֆլումաստերով, տպագրական մեքենայով կամ ժամանակակից տպիչ այլ սարքերի միջոցով:

13. Տրանսպորտային միջոցների հաջորդ տեխնիկական զննության անցկացման ամիսը նշվում է բանկերում տեխնիկական զննության կտրոնի դիմային մասի քառակուսի վանդակում այդ ամսվա հոմեական թվերով նշված հերթական համարը փակցնելու միջոցով:

14. Տեխնիկական զննության կտրոնը պետք է ունենա հատուկ դրոշմի միջոցով արված կտրվածքներ՝ ապակու վրա փակցնելուց հետո դրա ամբողջական պոկումը կանխելու նպատակով:

15. Նոր ներմուծված և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանությունում (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների համար տեխնիկական զննության կտրոնների տրամադրման ժամանակ տեխնիկական զննության կտրոնի «Համարանիշը» տողը չի լրացվում: Այն լրացվում է տրանսպորտային միջոցի հաշվառում կատարող պաշտոնատար անձի կողմից, իսկ «Հատուկ նշումներ» տողում լրացվում է տրանսպորտային միջոցի մաքսային մարմինների կողմից տրված տարանցիկ համարանիշը:

16. Բանկերի կողմից տիրապետողին տրված կտրոնի 2-րդ հատվածը՝ հավելվածը, ներկայացվում է տեխնիկական զննության կայանին՝ համապատասխան ծառայություններ ստանալու համար:

17. Տեխնիկական զննության կայանին տրամադրված տեխնիկական զննության կտրոնների 2-րդ հատվածները, ինչպես նաև կտրոնների համարները՝ էլեկտրոնային ցանկով, կայանի

կողմից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն համապատասխան ծառայությունների մատուցման դիմաց վճարում ստանալու համար:

18. Եթե մինչև հաջորդ տարվա հունվարի 30-ը տեխնիկական զննության կայանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն չի ներկայացնում տվյալ տարվա համար նախատեսված գումարների ստացման համար համապատասխան փաստաթղթերը, ապա մնացած գումարը դիտարկվում է որպես պետական բյուջեի եկամուտ:

III. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնի և տեխնիկական զննության անցկացման ամիսը նշագրող թերթիկների տպագրումն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունների կողմից՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պատվերով:

20. Տպագրման ենթակա կտրոնների թիվը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից՝ տարբեր ժամկետներում տեխնիկական զննություն անցնող տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների թվից ելնելով:

21. Ճանապարհային ոստիկանությունը յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ գրանցված ավտոտրանսպորտային միջոցների և դրանց կցորդների թվի վերաբերյալ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրում է մինչև հուլիսի 15-ը:

22. Տեխնիկական զննության կտրոնները և տեխնիկական զննության անցկացման ամիսը նշագրող թերթիկները տպագրող կազմակերպությունից ստանում է Հայաստանի

Հանրապետության ֆինանսների նախարարի հրամանով կտրոնների պահպանման և հատկացման համար նշանակված նյութական պատասխանատու անձը:

23. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից ստացված կտրոնների պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ խիստ (հատուկ) հաշվառման փաստաթղթերի պահպանման համար սահմանված կարգով:

24. Նյութական պատասխանատու անձն իրեն հանձնված տեխնիկական զննության կտրոնների համար էլեկտրոնային եղանակով վարում է առանձին հաշվառում ըստ կտրոնների համարների՝ համաձայն կտրոնների ստացման և հատկացման հաշվառման մատյանի N 1 ձևի:

25. Բանկերը կտրոններ և տեխնիկական զննության անցկացման ամիսը նշագրող թերթիկներ ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 2 ձևի:

26. Ներկայացված հայտի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից լիազորված անձի կողմից կտրոնների հատկացման վերաբերյալ հանձնարարական է տրվում հաշվապահական հաշվառումն իրականացնող ծառայության ղեկավարին և կտրոնների պահպանման ու հատկացման համար նշանակված նյութական պատասխանատու անձին:

27. Կտրոնների բացթողման հանձնարարականի հիման վրա հաշվապահական հաշվառումն իրականացնող ծառայությունը կատարում է բացթողման ձևակերպումները, այդ թվում՝ լրացնում է ելքի ապրանքագիր: Ելքի ապրանքագրում պարտադիր նշվում են տրամադրվող կտրոնների թիվը և համարները՝ ըստ դրանք ստացող բանկերի:

28. Տեխնիկական զննության կտրոնների պահպանման և բացթողման համար նշանակված նյութական պատասխանատու անձը կտրոնները բաց է թողնում բանկերում դրանց պահպանման և բացթողման համար նշանակված նյութական պատասխանատու

անձին՝ վերջինիս անունով դուրս գրված համապատասխան լիազորագրի, անձնագրի ներկայացման, ինչպես նաև ելքի ապրանքագրի ու համապատասխան հաշվապահական ձևակերպումների մասին վկայող այլ փաստաթղթերի առկայության դեպքում:

29. Տվյալ տարվա համար նախատեսված չօգտագործված կտրոնները ենթակա են ոչնչացման (մարման) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հրամանով ստեղծվող հանձնաժողովի կողմից: Մինչև ոչնչացումը չօգտագործված կտրոնների պահպանումն ու հաշվառումը կատարվում է սույն կարգի 23-րդ և 24-րդ կետերում նշված կարգով:

IV. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՏՐՈՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ, ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

30. Բանկերում կտրոնների պահպանման համար նյութական պատասխանատու անձի կողմից էլեկտրոնային եղանակով վարվում է տեխնիկական զննության կտրոնների հաշվառման և բացթողման մատյանը՝ համաձայն N 3 ձևի:

31. Բանկերի աշխատողների կողմից էլեկտրոնային եղանակով վարվում է տեխնիկական զննությունների անցկացման և կտրոնների օգտագործման հաշվառման մատյան՝ համաձայն N 4 ձևի:

32. Արգելվում է տեխնիկական զննության կտրոնների օտարումը կամ այլ կերպ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը և այլն) այլ անձանց:

33. Բանկերում ներքին ակտով յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 10-ը կատարվում է իրենց կողմից ստացված, տրամադրված և մնացորդում առկա կտրոնների գույքագրում:

34. Գույքագրման արդյունքում արձանագրված տեղեկությունները ներառվում են բանկերի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետու-

թյան ֆինանսների նախարարություն կիսամյակային կտրվածքով ներկայացվող հաշվետվությունում:

35. Բանկերի լուծարման կամ գործունեության դադարեցման, կամ լիցենզիայի գործողության կասեցման դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հրամանով ստեղծվող հանձնաժողովը բանկում բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ, պարտադիր կատարում է չօգտագործված կտրոնների մնացորդների գույքագրում և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից սահմանված կարգով չօգտագործված կտրոնները հանձնվում են կտրոնների պահպանման և հատկացման համար նախարարությունում նշանակված նյութական պատասխանատու անձին:

36. Տվյալ տարվա համար նախատեսված չօգտագործված կտրոնները մինչև հաջորդ տարվա հունվարի 10-ը համապատասխան ընդունման - հանձնման ակտով վերադարձվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ

NN ը/կ	Մարզերի անվանումները	Տեխնիկական զննության կայանի ծածկագիրը
1.	Երևան քաղաք	01 00
2.	Արագածոտնի մարզ	02 00
3.	Արարատի մարզ	03 00
4.	Արմավիրի մարզ	04 00
5.	Գեղարքունիքի մարզ	05 00
6.	Լոռու մարզ	06 00
7.	Կոտայքի մարզ	07 00
8.	Շիրակի մարզ	08 00
9.	Սյունիքի մարզ	09 00
10.	Վայոց ձորի մարզ	10 00
11.	Տավուշի մարզ	11 00

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Ստացված կտրոնների						Բաց թողնված կտրոնների						մնացած կտրոն- ների թիվը (հատ)	
	ստացման անդորրագրի		թիվը (հատ)	կտրոնների համարները		պատասխա- նատու անձի ստորագրու- թյունը	բացթողման անդորրագրի		թիվը (հատ)	համարները		պատասխա- նատու անձի ստորա- գրությունը		ստացող անձի ստորա- գրությունը
	համարը	ամսա- թիվը		առա- ջինի	վեր- ջինի		համարը	ամսա- թիվը		առա- ջինի	վեր- ջինի			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1														
1.														
2.														
3.														
4.														

Հ Ա Յ Տ

20___ ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ

Բանկի անվանումը _____
Գտնվելու վայրը _____
Փոստային հասցեն _____
Բանկային տվյալները _____
Լիցենզիա N _____ Տալու ամսաթիվը _____
Հեռախոսահամարը _____ Ֆաքսը _____ Էլ. փոստը _____

Խնդրում եմ _____ տարածքում
(տարածաշրջանի անվանումը)

20___ թվականի ընթացքում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական
զննություն անցկացնելու նպատակով մեր բանկին հատկացնել _____
(թվերով)

(_____) հատ տրանսպորտային միջոցների տեխնիկական
(տառերով)

զննության կտրոն և նույն թվով տեխնիկական զննության անցկացման ամիսը նշագրող թերթիկներ:
Կտրոնների պահպանման, հաշվառման և օգտագործման սահմանված կարգի պահպանումը երաշխավորում եմ:

(պաշտոնը)

(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՄԱՆ

Բանկի անվանումը _____

1. Ստացված կտրոնները

NN ը/կ	Ստացման անդորրագրի		Թիվը (հատ)	Կտրոնների համարները		Պատասխանատու անձի ստորագրությունը	Ծանոթագրություն
	համարը	ամսաթիվը		առաջինի	վերջինի		
1	2	3	4	5	6	7	8
1.							
2.							
3.							

2. Բաց թողած և վերադարձված կտրոնները

NN ը/կ	Բաց թողած կտրոնները					Վերադարձված կտրոնները					Մնացած կտրոնների ընդհանուր
	բացթողման	թիվը (հատ)	կտրոնների համարները	պատասխանատու անձի	ստացող անձի ստորագրությունը	թիվը (հատ)	կտրոնների համարները	պատասխանատու անձի	ստացող անձի		

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Բանկի անվանումը _____


Բանկի աշխատողի ազգանունը _____

NN ը/կ	Ամսա- թիվը	Տրանսպորտային միջոցի				Հատկացված կտրոնի համարը	Նշում կտրոնը որպես կրկնօրինակ տալու մասին	Չօգտագործված կտրոնների թիվը*
		մակնիշը	պետհա- մարանիշը	թողարկման տարեթիվը	սեփականատիրոջ անվանումը			
1	2	3	4	5	6	7	8	9

* Չօգտագործված կտրոնների քանակը լրացվում է աշխատանքային հերթափոխի ավարտին՝ վերջին տողում:

Գ Ծ Ա Պ Ա Տ Կ Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՋՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԴԻՄԱՅԻՆ ԿՈՂՄԻ

<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՋՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆ</p> <p>2012 <input type="text"/></p>	
	
<p><input type="text" value="* 000001*"/></p>	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ծ Ա Պ Ա Տ Կ Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՀԱԿԱՈԱԿ ԿՈՂՄԻ

* 000001*	* 000001*
Տիրապետողի անուն, ազգանունը _____	Հավելված
Մակնիշը _____	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԿՏՐՈՆ Տիրապետողի անունը, Ազգանունը _____ Մակնիշը _____ Համարանիշը _____ Թողարկման տարեթիվը _____ Տեխնիկական զննության կայանի ծածկագիր _____ Տրման ամսաթիվը՝ _____ 20 թ.
Համարանիշը _____	
Թողարկման տարեթիվը _____	
Հատուկ նշումներ _____	

Տրման ամսաթիվը՝ _____ 20 թ.	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ